

ՄԱԿԱՆՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՁՆԱՆՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Փառանձեմ՝ Մեյթիխանյան

Անձնանվանական համակարգի (անուն, ազգանուն, տոհմանուն, հայրանուն, մականուն, կեղծանուն) քննությունը արդի լեզվաբանության կարևոր և առանցքային հարցերից մեկն է:

Մարդկային գիտակցությանը բովանդակային առումով հասու այսպես ասած առաջին անձնանունները մարդկանց շրջապատող աշխարհի առարկաների՝ կենդանիների, իրերի, բնության երևույթների, գաղափարների, հատկանիշների արտահայտություններն են: Այս առումով հինկտակարանյան եբրայական անձնանուններն ունեն բառային ընկալելի իմաստ, և այդ անուններով էլ առանձնացնում և տարբերակում են անհատներին՝ **Ադամ-հող, Եվա-կյանք, Ռաբել-ոչխար, Աբել-սուգ, Հարթ-ընդարձակություն, Մովսա-բաղարջ, Ազակ-տանիք, Ահարոն-լեռ կամ լեռնական, Լաբան-սպիտակ կամ փայլուն, Հազար-պանդուխտ, Հեսե-էակ կամ գոյ, Հովաս-հրեղեն, Մադիամ-դատաստան, Մանասե-մոռացում, Մովսես-ջրից հանված կամ փրկված, Շմավոն-հնազանդ, Որեբ-ագռավ** և այլն¹:

Անձնանունների, դրանց ծագման և այդ անունները կրող անձերի մասին թե՛ լեզվաբանական և թե՛ հանրագիտարանային եզակի աշխատություն է **Հր. Աճառյանի Հայոց անձնանունների բառարանը**, որտեղ հսկայական փաստական նյութ է հավաքված նաև մականունների վերաբերյալ²:

Անձնանունները քննելիս Հր. Աճառյանը, «Հայոց անձնանունների բառարանում» **Դավիթ** անունը միայնակ՝ իբրև անվանման կաղապար ներկայացնելով, արձանագրում է նույն այդ անվան հետ նաև մականվան միասնությունը՝ իբրև անվանման կաղապար. միևնույն դարերում գործել են տարբեր Դավիթներ՝ արդեն մականուն ունեցող, այսպես՝ **Դավիթ Ան-**

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Փ. Մեյթիխանյան, Աստվածաշնչի հայկականվանաբանություն**, Երևան, համ. հրտարակչություն, Երևան, 2017 թ.:

² **Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան**, (ՀԱԲ) հ. 1-5, Երևան, 1942-1962 թթ.:

հաղթ – Ե դար, **Դավիթ Բագրևանդացի** - Ս.Ստեփանոս վանքի վանահայր - Է դար, **Դավիթ Հռոմայեցի** - նշանավոր գիտուն վարդապետ- Ը դար, **Դավիթ Բ Կակազեցի** - հայոց կաթողիկոս - Թ դար, **Դավիթ Մաշկոյն** - Ժ դար, **Դավիթ Անհողին** - որդի և հաջորդ Գուրգենի - Ժ դար, **Դավիթ Ծարեցի** - Ծար գյուղի ջաղացպան - ԺԳ դար, **Դավիթ Իլովցի** – վաճառական - ԺԵ դար, **Դավիթ Խարբերդցի** – ԺԵ դար, **Դավիթ Ե Էնեզեթցի**- կաթողիկոս հայոց ԺԹ դար և այլք¹:

Սականունների ու պատվանունների վերաբերյալ հետաքրքիր ու հագեցած աշխատանք է Մանվել սարկավազ Սարգսյանի՝ «**Հայ հոգևորականների պատվանունների և մականունների բացատրական բառարանը**», որտեղ տրվում են բոլոր ժամանակների հայ հոգևորականների մականուններն ու պատվանունները²:

Սակայն *մականունը* առանձնակի տեսական քննության նյութ չի դարձել: Հայ ընթերցողը հիմնականում չի տարբերում կամ, ավելի ճիշտ, շփոթում է մականունը կեղծանունից և գործածում է մեկը մյուսի փոխարեն:

Կարծում ենք՝ հստակ տարանջատելի է *կեղծանունը մականունից*. դրանք տարբեր տերմիններ են և տարբեր իրողություններ են անվանում: Կեղծանունը և ծածկանունը, անկախ բաղադրիչ արմատների՝ *կեղծ*, *ծածուկ*, տարբերություններից, ունեն շփման եզրեր, և ինչպես ցույց են տալիս բազում օրինակները, այս տերմինները կարող են փոխարինել մեկը մյուսին, ինչպես՝ **Լեռ**, **Րաֆֆի**, **Շիրվանզադե**, **Սայաթ-Նովա**, **Լեռ Կամսար** անվանումները և՛ կեղծանուն են, և՛ ծածկանուն. դրանց մեջ որևէ տարբերություն չկա:

Կեղծանվան առաջացման հիմնական պատճառը երկար կամ անբարեհունչ անվան փոխարեն կարճ և բարեհունչ անուն ունենալու և հանրության շրջանում այդ անվամբ հայտնի դառնալու ցանկությունն է:

Կեղծանունը կարող է կամ նոր բառ լինել՝ տվյալ անձի ընտրությամբ, կամ իր անվանման ամբողջ բաղադրիչներից ստացված, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով նոր տարբերակներ և այլն:

Մինչդեռ մականունը չունի այս բնութագրիչները: Ահա թե ինչու հան-

¹ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. բառարան, հ. Բ, Երևան, 1944 թ., 22-62 էջեր:

² Տե՛ս **Սարգսյան Մ.** սրկ., *Հայ հոգևորականների պատվանունների ու մականունների բացատրական բառարան*, խմբ.՝ Գեորգ Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2018 թ.:

զամանորեն քննենք մականունը և նրա իմաստային ու կառուցվածքային խմբերը:

Մականունը (ռուս.՝ прозвище, прозвание, кличка, անգլ.՝ nickname, agnomen, ֆրանս.՝ sobriquet, գերմ.՝ Beiname) անհատին որևէ էական հատկանիշով տրվող բնութագրիչ վերադիր անուն է, որ, երբեմն տվյալ անձով պայմանավորված, առավել հաճախական է դառնում, քան նրա անձնանունը:

Մանուկ Աբեղյանը «Հայոց լեզվի տեսության» մեջ մականունը գործածում է իբրև շարահյուսական տերմին և որպես այդպիսին համարում խոսքի այն երկրորդական մասերը, որոնք դրվելով գոյականի վրա, որևէ կողմից պարզում, լրացնում են նրա նշանակությունը: Վերադիրները նա բաժանում էր երկու խմբի՝ *մականուն* և *բացահայտիչ*: «Մականուն ասվում են այն ածական կամ գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան վրա առաջից և որոշում, պարզում են անվան նշանակությունը, ինչպես՝ **բարձր** լեռներ, **երեք** մարդ, **այս** տունը, **խնձորի** ծառ»¹: Այնուհետև հեղինակը մասնավորեցնում է մականվան խոսքամասային դրսևորումները, այսպես՝ «1. Մի ածական, օրինակ՝... **ընդարձակ** տարածություն, ...**հսկայաձև** ժայռեր, ...**խոշոր** ամբարտակներ: 2. Մի գոյական որևէ հոլովով, օրինակ՝ **տառեխ** ձուկ..., **Վանա** լիճ..., երկու **բաժակ** ջուր..., **մահուդից** չուխա..., **Վարդան** զորավար..., **զորքերի** սպարապետ..., **Ավարայրի** ճակատամարտ»: Ինչպես նկատում ենք օրինակներից, ըստ Մ. Աբեղյանի՝ որոշիչը և հատկացուցիչը մականուններ են:

Մականունը անձնանվան դրսևորման մի տեսակ է, որը տրվում է անհատին իր շրջապատի կողմից: Ի տարբերություն անձնանվան, որը տրվում է մարդուն իր ծնողների ցանկությամբ, և այն դառնում է անհատի փաստական, անձնագրային անունը, մականունը տրվում է ըստ իրական հատկանիշի, և այն, ինչ խոսք, իրավական ոչ մի հիմք չունի և չի կարող ունենալ:

Արևմտահայերենում մականունը նույնական է ազգանվան հետ²:

¹ Այս դեպքում, կարծում ենք, չի կարելի համաձայնել *դրվում են անվան վրա առաջից* արտահայտությանը, որովհետև տարբեր ոճերում, ըստ նպատակադրման, կարելի է գործածել թե՛ նախադաս, թե՛ հետադաս: Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երևան, 1974 թ., 320-321 էջեր:

² Տես Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան. Երևան, «Արևիկ» հրտ., 1991թ., էջ 222:

Մականունները կարող են տրվել անհատին **համաժամանակյա** (ժամանակակից) և **տարժամանակյա** (պատմական) կտրվածքներով:

Համաժամանակյայի դեպքում անհատին հասու է իր մականունը, նա գիտի այդ մասին անկախ նրանից, որ այդ մականունը դրական, բացասական, հեգնական, ծաղրական ենթատեքստ ունի, ասենք մեր էպոսի հերոսների կամ որոշ հեքիաթների հերոսների անուններ՝ **Ձենով Օհան, Աղյուծաձև Մհեր, Քաջ Նազար** և այլն:

Պատմական նշանավոր դեմքերից շատերը՝ թագավորներ, կայսրեր, կաթողիկոսներ, տարբեր ժամանակների ազգային հերոսներ, մականուն են ստացել իրենց իսկ ապրած տարիներին, ինչպես՝ **Տիգրան Մեծ, Աշոտ Մեծագործ, Աղբյուր Սերոբ, Վազգեն Առաջին, Գարեգին Նժդեհ, Իվան Ահեղ, Լյուդովիկոս Տասնվեցերորդ, Պետրոս Մեծ**: Ի դեպ, Պետրոս Առաջինը իր **Մեծ (Белукуй)** մականունը ստացել է իր իսկ կառավարման տարիներին հատուկ հրամանով:

Տարժամանակյա մոտեցման դեպքում մականունը դրվում է ժամանակի ընթացքում, տվյալ անձի մահից հետո՝ հաշվի առնելով նրա անցած ուղին: Այդ մականուններն ու պատվանունները (մեծարող իմաստով) հաճախ դրվել են պատմիչների, իսկ հետագայում նաև պատմաբանների, գրականագետների կողմից, ինչպես՝ **Տրդատ Մեծ, Ներսես Մեծ, Արտավազդ Բ, Մովսես Խորենացի** և այլն:

Մականունները կարելի է առանձնացնել մի քանի բնութագրիչ հատկանիշներով՝

- 1) ըստ արտաքին տվյալների, ինչպես՝ Տորք Անգեղ, Արա Գեղեցիկ, Պիպին Կարճահասակ,
- 2) ըստ ներքին՝ հոգևոր, բարոյական որևէ բնութագրի, ինչպես՝ Դավիթ Անհաղթ, Աշոտ Մսակեր, Գայլ Վահան, Խիկար Իմաստուն, Սողոմոն Իմաստուն, Պտղոմեոս Ֆիլադելֆոս (Եղբայրասեր), Ձենով Օհան,
- 3) ըստ տարածքի (ծննդյան, որոշ շրջան մի տարածքում ապրելու, ինչոր վայրում (երկիր, քաղաք, վանք) ուսում ստանալու, ինչպես՝ **Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Վարդան Այգեկցի, Գրիգոր Նարեկացի, Սասունցի Դավիթ, Աբրահամ Խոշաբեցի, Դավիթ Էջմիածնեցի** և այլն¹:

¹ Սրանք հաճախ որոշ մասնագետների կողմից դիտարկվում են իբրև ազգանուն, իսկ եթե նկատի ունենանք նաև այն, որ մականունը որոշ աղբյուրներում նաև ազգանուն է

-Ացի, -եցի-, ցի- ածանցներով մականունները դարձան անուն-մականուն կաղապար և սուրբգրային գրականության շնորհիվ խիստ տարածվեցին հատկապես 5-17-րդ դարերում՝ երբեմն ընկալվելով որպես ազգանուն:

Միայն **Աբրահամ** անվան հետ մեր մատենագրության մեջ բազմաթիվ անձինք ստացել են – *ացի*, *-եցի*-ով տեղանվանական հիմքով մականուններ, ինչպես՝ **Աբրահամ- Գ Երուսաղեմացի, Գանձակեցի, Ծաղկաղբյուրցի, Անկյուրացի, Մշեցի, Գ Կրեպացի, Աստրապարցի, Երևանցի** և այլն:

Այս ածանցների ծագման հարցում լեզվաբանները համակարծիք են: Հ. Հյուբշմանը նշում է որ *ացի*-ն հայկական է, բայց այն ոչ թե ածանց, այլ վերջավորություն է համարում՝ բերելով **նածրացի, նազովրեցի** օրինակները¹:

Մանուկ Աբեղյանը տալիս է այս ածանցներով կազմությունների իմաստային խմբերը՝ մի տեղի բնակիչ լինելը՝ *գավառացի, աշատարակցի, փեղացի, խորենացի, փարպեցի...*, կազմում է ազգի անուն՝ *գերմանացի, իտալացի...*, մի աղանդի կամ ուսմունքի հետևող լինելը՝ *թոնդրակեցի, փարիսեցի*: Բայց չի առանձնացնում այն կազմությունները, որոնք մականուն-ազգանուն նշանակությունն ունեն, ինչպես՝ *Փարպեցի, խորենացի, Կարնեցի* և այլն²:

Ջահուկյանը սրանք համարում է հնդեվրոպական ծագման՝ ենթադրելով *-աց*-ով, *-եաց*-ով հիմքային ձևերի սեռական-տրականի հետ բաղարկություն³:

Ազգանունների կազմության և առաջացման մասին խոսելիս Հր. Աճառյանը երկրորդ տեղում է դնում անձի որտեղից լինելու հանգամանքը, ինչպես՝ **Գրիգոր Նարեկացի, Գևորգ Սկևռացի, Խաչատուր Տարսնացի** և այլն⁴: Մենք այս հարցում ավելի ճիշտ ենք գնահատում Տիգ-

նշանակում, ապա արտաոց որևէ բան այստեղ չենք տեսնում: Մեր կարծիքով, սակայն, մականվան այս իմաստային խմբերը հստակ տարանջատելի են, և ավելի համոզիչ է սրանք մականվան տեսակ համարելը:

¹ Տե՛ս Հ. Հյուբշման, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Երև. համ. հրտ., Երևան, 2004 թ., էջ 286:

² Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 228:

³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ասողիկ հրտ., Երևան, 2010 թ., էջ 801:

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 356:

րան Ավետիսյանի հետևյալ միտքը. «Միևնույն միավորին տարբեր անվանումներ տալը բխում է նրա էությունից: Հանդես գալով իբրև տարբերակիչ՝ այդ բաղադրիչները բառակազմորեն ևս բազմազանություն են հանդես բերում: Տոհմին, հայրանվանը, տեղանվանը, տիտղոսին, կոչմանը դիմելիս հետապնդվում էր մեկ նպատակ՝ անձի անհատականացում: Ինքը՝ երկրորդ բաղադրիչ կրողը, այն չէր նույնացնում հայրանուն, **առավել ևս ազգանուն ըմբռնման հետ** (ընդգծումը իմն է - Փ. Մ.): Ծայրահեղ դեպքում այդ բաղադրիչը կոչված էր ընդգծելու կրողի հանրային վարկը»¹: Այս ձևերը ենթադրում են որոշակի կաղապարներ՝

տեղանուն + -ացի,

տեղանուն + -եցի,

տեղանուն + -ցի:

Հր. Աճառյանը, տարբերակելով ազգանունը մականունից, իր *Հայոց անձնանունների բառարանի* Ե հատորում գրում է. «Կոստանդնուպոլսում մականունը հաճախ շփոթում են ազգանվան հետ և փոխանակ ասելու ազգանուն, ասում են մականուն, թյուրքերեն *լաղաթ*, այսինքն՝ *փուլաանուն*»²:

4) Ըստ տվյալ անձի գործունեության՝ Հայկ Նահապետ, Գրիգոր Մագիստրոս, Վահագն Վիշապաքաղ, Արտաշես Մեծագործ, Տիգրան Մեծ:

5) Ըստ ազգակցության, սերնդակցության, ինչպես՝ Տիգրան Երկրորդ, Պետրոս Առաջին, Լյուդովիկոս Տասնվեցերորդ, Արտաշես Առաջին, Արշակ Երկրորդ,³ ինչպես նաև՝ Տիգրան Կրտսեր, Գրիմ եղբայրներ, Դյումա հայր, Դյումա որդի:

Մականունները կարելի է տարանջատել նաև մեկ այլ չափանիշով, ասենք՝

ա) հեթանոսական դիցարանին, աստվածներին, Աստվածամորը տրվող

¹ Տե՛ս **Տ. Ավետիսյան**, *Հայկական ազգանուն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Երևան, 1987 թ., էջ 42:

² Տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ.Ե, էջ 360:

³ Ասենք, որ այս մականունները ունեն գրության տարբեր ձևեր՝ **Արշակ Բ**, **Արշակ Երկրորդ**, **Արշակ 2-րդ**, **Արշակ II**, և սրանցից յուրաքանչյուրը ճիշտ ձև է, բայց նախընտրելին մականունը տառով գրելն է, բայց բառով արտասանելը, այսինքն՝ **Արշակ Բ**⁷ գրության մեջ, բայց **Արշակ Երկրորդ**⁷ արտասանության դեպքում:

- մականուններ, ինչպես՝ Վահագն **Վիշապաքաղ**, **Ոսկեծղի** Անահիտ, **Ոսկեմայր** Անահիտ, Տորք **Անգեղ**, Արա **Գեղեցիկ**, Հայկ **Աղեղնավոր**, Հիսուս **Նազովրեցի (Նազարեթցի)**, Մարիամ **Աստվածածին**,
- բ) թագավորների, փարավոնների, իշխանների, նախարարների մականուններ, ասենք՝ Արտաշես **Ա Բարեպաշտ**, Թուրթուս **Առաջին**, Ռուսա **Երկրորդ**, Ռիչարդ **Առյուծասիրտ**, Պողոս **Եղբայրասեր**, Իվան **Ահեղ**, Աշոտ **Երկաթ**, Աշոտ **Մսակեր**, Աշոտ **Ողորմած**, Արամ **Աշխարհակալ**, Գևորգ **Մարգարետունի**, **Տլիկ** Ամրամ, Դավիթ **Շինարար**, Դարեհ **Կողմանոս**, Յուրի **Դուրդուրուկի (Երկայնաբազուկ)**, Խոսրով **Կոտակ**, Տիգրան **Մեծ**, Տրդատ **Մեծ**, Կառլոս **Մեծ**, Կյուրոս **Մեծ**¹, Նիկոլայ **Առաջին**, Շապուհ Երկրորդ **Երկարակյաց**, Սողոմոն **Իմաստուն**², Պեդրո **Առաջին Դաժան**, Սանչո **IV Խիզախ**, Ալֆոնսո **XI Արդարամիտ**, Պեդրո **III Մեծ**, Պեդրո **IV Ցուցամուկ**, Մարտին **I Մարդասեր**, Ֆելիպե **I Գեղեցիկ** և այլն,
- գ) հասարակական-քաղաքական, կրոնական, ազատագրական պայքարի հայտնի գործիչների մականուններ, ասենք՝ Զաքարիա **Սարկավագ**, **Մայր** Թերեզա, Վազգեն **Սպարապետ**, Ղևոնդ **Երեց**, Գևորգ **Չաուշ**, Նիկոլ **Դուման**, **Աղբյուր** Սերոբ, **Կայծակ** Առաքել, Գարեգին **Նժդեհ**, **Դժոխք** Հրայր, Իսրայել **Օրի**, Գրիգոր **Լուսավորիչ**, Ներսես **Մեծ**, Սահակ **Պարթև**, Կոմիտաս **Ա Աղցեցի**, Կոստանդին **Է Ծիրանածին**, Հակոբոս **Տյառնեղբայր**, Ներսես **Դ Կլայեցի (Շնորհալի)**, Պետրոս **Ա Գետադարձ**, Ստեփանոս **Նախավկա**, Հոբ **Երանելի**, Վասիլի **Երանելի**, Տիմոթեոս **Կուզ** և այլն:
- Առավել հանգամանալից ներկայացնենք երկու օրինակ:
- Գրիգոր Լուսավորիչ:** Հունական *Գրիգորիոս* անունը հայերենում դառնում է *Գրիգոր*, որի բուն նշանակությունն է *արթուն*, *հսկող*: Փոխառել են այս անունը քրիստոնյա բոլոր ազգերը: Այս անվամբ և տարբեր մականուններով հայտնի են *Գրիգոր Աքանջելագործը (Որոգինեսի աշակերտ)*, *Գրիգոր Նազիանզացին*, *Գրիգոր Նյուսացին*, *Հռոմի տաս-*

¹ Ինչպես նկատում ենք, այս խմբի մականունների մեջ ամենահաճախականը **Մեծ** մականունն է:

² Ի դեպ, *Իմաստուն* մականունը բնորոշ է շատ ժողովուրդների, ինչպես՝ հրեաների թագավորը՝ *Սողոմոն Իմաստուն*, ռուսներինը՝ *Յարոսլավ Իմաստուն*, իսպանացիներինը՝ *Ալֆոնսո X Իմաստուն*:

նյակ պապեր, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Գրիգոր Տղան, Գրիգոր Տաթևացին և այլք:

Գրիգոր Լուսավորչի անվան ծագման վերաբերյալ կա նաև ժողովրդական ստուգաբանություն: Ըստ Գ. Տաթևացու՝ դայակը մանուկ Գրիգորին Կեսարիա փախցրած ժամանակ գուրգուր կամ դռուն թռչունը գալիս նստում է ծառի վրա և երգում *գո՛ւր, գո՛ւր*: Դայակը կարծում է, թե Ս. Հոգին է, և երեխայի անունը դնում է *Գրիգոր*, (Հր. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. Ա, էջ 519-520):

Գրիգոր Ա Լուսավորիչը՝ Պարթև Անակի որդին, դարձավ Հայոց հայրապետական աթոռի առաջին գահակալը, սուրբ առաքյալներ Թադևոսից և Բարդուղիմեոսից հետո եղավ հայոց լուսավորիչը, որի շնորհիվ Հայաստանում հաստատվեց քրիստոնեությունը: Ահա թե ինչու նա այն միակ սուրբն է, որի հիշատակը տոնվում է աշխարհի բոլոր առաքելահիմք եկեղեցիներում ևս՝ լինի ուղղափառ, թե կաթոլիկ: Մ. Ավգերյանը գրում է. «Պսակ պարծանաց մերոց սուրբ հայրն մեր Գրիգորիոս, որ ի ժամագիրս յունաց կոչի Պարծանք Հայաստանեայց և լուսաւորիչ համաշխարհական...» (ԼՎՎՍ, հ. Գ, էջ 375):

Ներսես Շնորհալի/Կլայեցի: Հայ եկեղեցու, գրականության և մշակույթի կարկառուն ներկայացուցիչ, որն ապրել ու ստեղծագործել է Կիլիկյան Հայաստանում ԺԲ դարում: Սերում է Պահլավունիների տոհմից՝ Ապիրատ Պահլավունի իշխանի երրորդ արու գավակը: Պահլավունիների տոհմից հայտնի են հասարակական, մշակութային և հոգևոր շատ նշանավոր դեմքեր՝ **Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Ավագ Վկայասեր, Գրիգոր Փոքր Վկայասեր, Գրիգոր Տղա, Ներսես Լամբրոնացի:**

Քեսունի Կարմիր վանքում ուսանած ուրիշները ևս կրել են **Շնորհալի** պատվանունը՝ **Սարգիս Շնորհալի, Իգնատիոս Շնորհալի, Բարսեղ Շնորհալի**, բայց նրանցից առավելապես փայլել է ու մնացել **Ներսես Շնորհալին:**

Շնորհալին մինչև իր կյանքի վերջը ապրեց ու ստեղծագործեց Հռոմկլայում, որի պատճառով էլ ստացավ նաև **Կլայեցի** մականունը:

Ներսես Շնորհալին իր բազմաբեղուն աշխատանքի համար բարձր է գնահատվել թե՛ իր ժամանակակիցների, թե՛ հետագա սերունդների կողմից և ստացել բազում պատվանուններ՝ **Տիեզերալույս, Երկրորդ Լուսավորիչ, Տիեզերական վարդապետ, Իմաստասեր, Հռեյոր:**

դ) Գրողների, բանաստեղծների, արվեստի գործիչների մականուններ, ասենք Եղիշե **Չարենց**, Նահապետ **Քուչակ**, Հովհաննես **Սարկա-**

վագ, Հովհաննես **Պլուզ**, Սարգիս **Պիծակ**, Թորոս **Ռոսլին**, Գրիգոր **Տղա**, Ներսես **Շնորհալի**, Երվանդ **Քոչար**, Ռուբեն **Սևակ**, Պարույր **Սևակ**, Լևոն **Շանթ**, Մկրտիչ **Նաղաշ**, Մխիթար **Գոշ**, **Նաղաշ** Հովնաթան, Պաղտասար **Դպիր**, Սևդա **Սևան** և այլն:

ե) Գրական, երաժշտական ստեղծագործությունների հերոսներ, ինչպես՝ **Անբան** Հուռի, **Քաջ** Նազար, **Լառ**-Մարգար, **Ձորի** Միրո, **Մարա Մելիք**, **Ձենով** Օհան, **Առյուծաձև** Մհեր:

Խորհրդային տարիներին և հատկապես անկախացումից հետո մեր հանրապետությունում մականունները չափից դուրս շատացան: Գյումրին այս առումով անմրցելի է: Բերենք մի քանի օրինակներ գյումրեցիների մականուններից, որոնցից շատերը թերևս կարելի է գտեհկաբանությունների շարքին դասել, ինչպես՝ **Ախոռ Գրիշ**, **Ասյոլ Մնաց**, **Բմբուլ Սերոժ**, **Չապաս Քերոբ**, **Գրամաֆոն Արամ**, **Թիթեռ Արտուշ**, **Լանգեպ Մուկուչ**, **Խուրդա Համո**, **Ծիծեռնակ Սերոժ**, **Մունդառ Օնես**, **Շոշի Մկր**, **Պղպոր Մանուկ**, **Ջազվա Սուրեն**, **Ցիպրուս Սամվել**, **Քացախ Արամ** և այլն¹: Ժողովրդական խոսքում, ինչպես տեսնում ենք, մականունները հեզնական, երգիծական երանգ ունեն: Թերևս այստեղից էլ **փուրանուն** տերմինը:

Իսկ այս ձևերին ուղիղ հակառակ, հարգանքի, պատվի, մեծարանքի դեպքում մականունները դառնում են **պատվանուններ**, ինչպես՝ **Քերթոնդահայր Խորենացի**, **Լուսավորիչ Արովյան**, **Դավիթ Անհաղթ**, **Աշոտ Երկաթ**, **Տիգրան Մեծ** և այլն:

Պատվանուններն ի սկզբանե գործածվել են թագավորներին և կաթողիկոսներին մեծարելու համար²: Պատվանուններ են համարվում նաև մեկ բառով, առանց անձնանվան դրսևորումները, ինչպես՝

Աղավնի – Աղավնին Սուրբ Հոգու խորհրդանիշն է, միջնադարում բավական հաճախ գործածվել է իբրև իգական անձնանուն, բայց ահա ժԹ դարում դարձել է պատվանուն Կ.Պոլսի պատրիարք **Ստեփանոս Բ Պրուսացի Չաքարյանի** համար (1831-1841 թթ.)՝ իր բարյացակամ, հեզ ու բարեհամբույր բնավորության շնորհիվ³:

Հայրիկ /Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան – Սովորաբար հոգևորականներին դիմում են կամ մեծարում **հայր** մակդիրով, բայց Մկրտիչ Խե-

¹ «Դար» ակումբ, akumb, am

² Նշենք, որ **Աղավնի**-ն քսաներորդ դարում դարձել է նաև գրական կեղծանուն:

³ Տե՛ս նշվ. բառարանը, էջ 18:

րանյանն այն եզակի անձնավորությունն է, որին ողջ ժողովուրդը մեծաբեց **Հայրիկ** պատվանունով:

Անուն-մականուն: Առավել տարածված է անուն-մականուն կաղապարը: Հաճախ այս կաղապարը մարդիկ համարում են կեղծանուն կամ ծածկանուն: Կարծում ենք, որ դա չի համապատասխանում այս անվանումների բուն էությանը, քանի որ անունը տվյալ անձի իրական անունն է, իսկ երկրորդ բաղադրիչը ոչ հայրանուն է, ոչ ազգանուն, այլ տվյալ անհատի (կարող է նաև ուրիշների) կողմից դրվել: Այս կաղապարում ևս երկրորդ բաղադրիչը (երբեմն՝ առաջինը) դիտարկվում է իբրև մականուն-պատվանուն կամ ուղղակի՝ պատվանուն ինչպես՝ **Տիգրան Մեծ, Արտաշես Ա Բարեպաշտ, Ներսես Մեծ** և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ հատկապես արքաների և հոգևորականների (մասնավորապես կաթողիկոսներ) անվանման կաղապարները ներկայանում են ոչ միայն անուն-մականուն երկբաղադրիչ կաղապարով, այլև **եռաբաղադրիչ** անգամ **քառաբաղադրիչ կաղապարներով**, որոնցում առկա է երկու կամ երեք մականուն: Երկբաղադրիչի դեպքում մեկը հաճախ տվյալ անձի կարգահամարն է, մյուսը՝ նրա մականունը կամ պատվանունը, ինչպես՝ **Պետրոս Ա Գեղաղար, Գրիգոր Ե Քարավեժ, Արտաշես Ա Բարեպաշտ, Սարգիս Բ Աջափար, Ղազար Բ Մոկացի** և այլն:

Կարգահամարի փոխարեն կարող է լինել տվյալ հոգևորականի եկեղեցական ստորակարգության կոչումը, ինչպես՝ Ստեփանոս վրդ. Տարոնեցի, Ներսես եպս. Աղթամարցի, Համամ վրդ. Արևելցի, Թեոդորոս վրդ. Քոթնավոր, Հարություն սրկ. Բյուզանդացի:

Հանդիպում են քառաբաղադրիչ անվանական կաղապարներ, ինչպես՝ **Մարթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրյան**, որն ի դեպ, իր հաստատակամ բնավորության պատճառով ստացել է նաև **Երկաթյա** մականունը, **Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան**, նաև չմոռանանք **Հայրիկ** պատվանունը, **Ստեփանոս Բ Պրուսացի Ջաքարյան**, որ, ինչպես նշեցինք վերևում, ուներ նաև **Աղավնի** պատվանունը և այլք:

Ամենատարածվածը, ինչ խոսք, երկանդամ՝ անուն-մականուն (պատվանուն) կաղապարն է:

¹ Տվյալ դեպքում արդեն *վարդապետ, սարկավագ, եպիսկոպոս* և նման կոչումները մականվան մեջ ներառում են նաև դրանց շարահյուսական գործառույթը. դրանք մականուն որոշիչներ են:

Այսպիսով՝ մականունը՝ իբրև լեզվաբանական տերմին, ունի իր հրատակ բնութագրիչները և դրսևորվում է տարբեր չափանիշներով, որն էլ հիմք է տալիս այն չնույնացնելու կեղծանվան կամ ծածկանվան հետ: Արևմտահայ իրականության մեջ մականունը նույնանում է ազգանվան հետ, մինչդեռ արևելահայերենում դրանք հստակ տարբերակվում են: Անձին տրված համաժամանակյա և տարժամանակյա մականունները բնութագրվում են ամենատարբեր իմաստային խմբերով և կառուցվածքային կաղապարներով:

***Բանալի բառեր՝** մականուն, կեղծանուն, ծածկանուն, պատվանուն, ազգանուն, անուն-մականուն կաղապար, միաբաղադրիչ մականուններ, երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ մականուններ, համաժամանակյա և տարժամանակյա մականուններ:*

ПРОЗВИЩЕ И ЕГО ПРОЯВЛЕНИЯ В СФЕРЕ АНТРОПОНОМИКИ

Парандзем Мейтиханян

***Ключевые слова:** псевдоним, прозвище, титульное имя, фамилия, имя-прозвище шаблон, однокомпонентные прозвища, двухкомпонентные и многокомпонентные прозвища, синхронные и диахронные прозвища.*

Прозвище - это дополнительное имя, присваиваемый физическому лицу, исходя из его существенных особенностей, которое иногда используется чаще, чем имя человека.

Прозвище создается как в синхронном, так и в диахронном аспектах. В случае синхронности человек имеет доступ к своему прозвищу, он знает о нем независимо от того, оно имеет положительный, отрицательный, ироничный или смешной подтекст. В случае диахронического подхода прозвище присваивается со временем, иногда после смерти человека, с учетом его пройденного пути.

Прозвища можно различить по нескольким характеристикам: по внешним данным, по внутренним – по кокому-нибудь духовному, моральному определению, по местности, по деятельности данного человека, по его роду. Это важный, но не единственный путь возникновения прозвищ: есть и такие, которые заимствованы из прозвищ, данных языческим богам, богоматери, королям, фараонам, князьям, общественно-политическим и религиозным деятелям, известным лицам национальной-освободительной борьбы и т.д.

Структурные шаблоны прозвищ разные- однокомпонентные и многокомпонентные.

Одно из видов прозвищ - это титульное имя, которое изначально использовалось для почтения королей и католиков.

NICKNAME AND ITS MANIFESTATIONS IN THE AREA OF ANTHROPONOMICS

Parandzem Meytikhanyan

Keywords: *nickname, pseudonym, honorname, surname, name-nickname template, one-component nicknames, two-component and multi-component nicknames, synchronic and diachronic nicknames.*

A nickname is a descriptive additional name given to an individual with an essential attribute, which is sometimes used more often than the person's name.

The nicknames are formed in both synchronous and diachronous aspects. In the case of synchronicity, the individual has access to his nickname, he knows about it in spite of the fact that the nickname has a positive, negative, ironic or ridiculous context. In the case of a diachronous approach, the nickname is given within the time, sometimes after the death of the person, taking into account his life way.

Nicknames can be distinguished by several characteristics: by external description, by internal features - by any inward or moral characteristic, by his residence or his activity, also by his generation. This is a possible but not the only version of the classification; nicknames can be classified by other characteristics, such as nicknames given to pagan myths, gods, Deiparous, nicknames of the kings, pharaohs, princes, social-political or religious persons, the figures of national-emanicipation struggle etc.

The structural templates of the nickname are different: single-component and multi-component.

The honorname is a kind of nickname, which was originally used to respect kings and Catholicoses.